

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 39/8**

**6 հոկտեմբերի 2015 թ.**

Քննարկվեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի 03.09.2015 թ-ի գրությամբ բերված բողոքը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.08.2015 թ-ի թիվ 77 որոշման դեմ:

#### **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի բողոքում բերված փաստարկները.**

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի բողոքարկվում է ՀՀ ֆինանսների նախարարության 21-ը օգոստոսի 2015 թվական N 77 որոշումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմը եկամտահարկի գծով հարկային պարտավորություններ չունի:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Զբաղվածության պետական գործակալության մարզային և տարածքային կենտրոնների և ՀՀ ֆինանսների նախարարության հարկային /տարածքային/ տեսչությունների հետ կազմված փոխադարձ ակտերը վկայում են, որ չմարված հարկային պարտավորություններ արձանագրված չեն:

Փոխադարձ ակտերը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ ներկայացվել են Կենտրոնի հարկային տեսչություն, հարկային պարտավորությունը մարելու նպատակով:

Վերոգրյալով պայմանավորված, հիմք ընդունելով կցված փոխադարձ ակտերը՝ բողոքաբերը պահանջում է ՀՀ ֆինանսների նախարարության 2015 թվականի օգոստոսի 21-ի N 77 որոշումը չեղյալ համարել, իսկ եկամտակարկի գծով հարկային պարտավորությունները՝ մարված:

Կից ներկայացնում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Զբաղվածության պետական գործակալության մարզային և տարածքային կենտրոնների և ՀՀ ֆինանսների նախարարության հարկային /տարածքային/ տեսչությունների հետ կազմված փոխադարձ ակտերի ցանկը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 18.08.2015 թ-ի

դրությամբ ՊՈԱԿ-ի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 9.276.136 դրամ, որն ամբողջությամբ եկամտահարկի գծով է, որից ապառք 5.994.271 դրամ, տույժ 3.281.865 դրամ: Եկամտահարկի գծով պարտավորությունն առաջացել է 2012 թ-ի 4-րդ եռամսյակի հաշվարկով: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 21.08.2015 թ-ին ընդունվել է թիվ 77 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ից 9.276.136 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմի «ՀՀ Զբաղվածության ծառայություն» և «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության» գործակալությունների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների ու եկամտահարկի հաշվարկման, վճարման և հաշվետվությունների ներկայացման կարգը հաստատելու մասին 08.04.2003թ-ի թիվ 33-Ա/1 հրամանի հավելված 1-ի համաձայն Աշխատակազմի գործակալությունները և դրանց ինքնուրույն հաշվապահական հաշվառում վարող տարածքային մարմինները հաշվարկված եկամտահարկի գումարներն իրենց սպասարկող տեղական գանձապետական բաժնում Աշխատակազմի անվամբ բացված գանձապետական ենթահաշիվներից փոխանցում են ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Երևանի Մյասնիկյանի հարկային տեսչությունում ՀՀ սոցիալական ապահովության նախարարության գրանցման համարի 15-01506515 կողով՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005006011 հաշվին, իսկ պարտադիր սոցիալական ապահովագրության գծով հաշվարկված վճարների գումարները՝ իրենց սպասարկող տեղական գանձապետական բաժնում Աշխատակազմի անվամբ բացված գանձապետական ենթահաշիվներից փոխանցում են ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Երևան քաղաքի Կենտրոն-2 տարածքային կենտրոնում ՀՀ սոցիալական ապահովության նախարարության հարկային մարմնում գրանցման համարի 15-01506515 կողով, Կենտրոնական գանձապետարանի 900009900110 հաշվին: Աշխատակազմի Գործակալությունների ինքնուրույն հաշվապահական հաշվառում վարող տարածքային մարմինները յուրաքանչյուր եռամսյակի համար իրենց գործակալությանն են ներկայացնում հաշվարկված և վճարված եկամտահարկի ու պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին հաշվետվությունները (կցելով վճարման հանձնարարականների պատճենները): Գործակալություններն ամփոփում և մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությանն են ներկայացնում իրենց և տարածքային մարմինների եռամսյակային ամփոփ հաշվետվությունները (կցելով վճարման հանձնարարականների պատճենները): Աշխատակազմի վարչությունը կազմում և Կենտրոն-2 ՏԿ-ին ու Հարկային տեսչությանն է ներկայացնում Աշխատակազմի եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների վերաբերյալ եռամսյակային ամփոփ հաշվետվությունները:



«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 02.03.2007 թ-ի N26-Ա/1 հրամանի համաձայն ուժը կորցրած է ճանաչվել 08.04.2003 թ-ի 33-Ա/1 հրամանը և հաստատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, «Զբաղվածության պետական ծառայություն» և ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունների, ՀՀ աշխատանքի պետական տեսչության և դրանց հաշվապահական հաշվառում վարող տարածքային մարմինների կողմից եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման, վճարման և հաշվետվությունների ներկայացման կարգը:

Համաձայն 02.03.2007 թ-ի N26-Ա/1 հրամանի հավելվածի Վարչությունը, Գործակալությունները, Տեսչությունը և Կենտրոնները հաշվարկված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գումարներն՝ իրենց սպասարկող ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տեղական գանձապետական բաժնում Աշխատակազմի անվամբ բացված գանձապետական հաշիվներից փոխանցում են ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության Երևանի Մյասնիկյանի հարկային տեսչությունում Աշխատակազմի գրանցման համարի կողով՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարանի համապատասխան գանձապետական հաշվին:

Գործակալությունները և Տեսչությունը Վարչություն են ներկայացնում հաշվարկված և վճարված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին սահմանված ձևի հաշվետվությունները (կցելով յուրաքանչյուր ամիս կատարված վճարման հանձնագրերի պատճենները), որն էլ սահմանված կարգով և ժամկետներում Հարկային տեսչություն է ներկայացնում «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության մասին» ամփոփ հաշվետվությունները:

Հարկային բազայում առկա վճարումների և ներկայացված վճարման փաստաթղթերի համադրման արդյունքում պարզվել է, որ որոշ վճարման փաստաթղթերում «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի 01506515 ՀՎՀՀ-ի փոխարեն նշվել են համապատասխան առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Զբաղվածության գործակալության մարզային և տարածքային կենտրոնների ՀՎՀՀ-ները: Արդյունքում կատարված վճարումները չեն արտացոլվել «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի /ՀՎՀՀ 01506515/ անձնական հաշվի քարտերում, որի հետևանքով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Զբաղվածության պետական գործակալության մարզային և տարածքային կենտրոնների հարկային տեսչությունների անձնական հաշվի քարտերում առաջացել է գերավճար, իսկ «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի /ՀՎՀՀ 01506515/ անձնական հաշվի քարտում՝ պարտավորություն:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Որոշմամբ եկամտահարկի գծով գանձման առաջադրված պարտավորություններն առաջացել են համապատասխան վճարման փաստաթղթերում «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի ՀՎՀՀ-ի փոխարեն առանձնացված ստորաբաժանում հանդիսացող Զբաղվածության

գործակալության մարզային և տարածքային կենտրոնների ՀՎՀՀ-ները նշվելու հետևանքով: Սակայն հարկ է փաստել, որ վերոգրյալի հետևանքով եկամտահարկի գծով պետական բյուջե վճարման ենթկա գումարների թերվճարման փաստ տեղի չի ունեցել, այսինքն՝ պետական բյուջեին, ըստ էության, վնաս չի պատճառվել:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, որի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Միևնույն ժամանակ, ստեղծված իրավիճակում խնդրո առարկա հարցին լուծում տալու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի շահագրգիռ հարկային (տարածքային) տեսչությունները, ինչպես նաև ՀՀ ՖՆ համապատասխան ստորաբաժանումը (ՀՀ ՖՆ ՏՏ վարչություն), ուսումնասիրեն համապատասխան վճարման փաստաթղթերը, վեր հանեն դրանցում «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի ՀՎՀՀ-ի փոխարեն Զբաղվածության գործակալության մարզային և տարածքային կենտրոնների ՀՎՀՀ-ները նշվելու դեպքերը և համատեղ համադրումների միջոցով վերահաշվարկեն թե՛ վերոգրյալ մարզային և տարածքային կենտրոնների անձնական հաշվի քարտերում առաջացած գերավճարները, թե՛ եկամտահարկի գծով «ՀՀ սոցիալական ապահովության նախարարության աշխատակազմ» ՊՈԱԿ-ի անձնական հաշվի քարտում առաջացած պարտավորությունները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 21.08.2015 թ-ի թիվ 77 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ